

աւելի ուրե կերպով կ'ըմբռնեմ քան թէ ուս
րիշ որ և է մէկը, լուսաւոր քննադատու-
թիւնը, կարելի է ցոյց կու տայ իմ ուր-
ուանկարիս մէջի թիրութիւններու: Այս ես
կը յուսամ թէ իմ սխաներս, որոնք ես ոչ
երրեք կ'ուզեմ հանխաւ անուանել չնշին,
զի գիտութեան մէջ՝ որ և է չնշին, ունի
իր նշանակութիւնը, ոչ թէ լինին այնպիսի-
ներ, որոնք իմ « Տարեգրութիւնն » զգեցն
իր հիմնական նշանակութիւննեն, այլ ծառա-
յեն փատահելի կոռուան մը բոլոր հայ պատ-
մութեան: Թէպէս ես խոնճուանքով և սիրե-
լով աշխատած եմ գործին վրայ րայց կա-
րելի է որ և է բան վրիպած ըլլայ աշքէս,
անձիշդ մեկնութիւն տուած ըլլամ և ոչ բո-
րբովին ճշգի բացարարութիւն տուած: այլ
ինձ համար իրեւ ենթինակ՝ ամենածանրն է ոչ
թէ այս անխուսափելի սխաները, այլ այն
որ ես հարկադրուած եղայ շատ հարեւանցի
կերպով ջշափել, երկար շարք մը ինդիրո-
ներու, և ի հարկին ստիպուած՝ թողուլ մը-
թութեան մէջ, տանց լուսարաններու: Այս
պէս հրաժարիլ նշանաւոր պատմութեան
գործիշներու բնաւորութեանց նկարագրէն:
Ուստի ընթերցողին հաստատուն խորհուրդ
կու տամ — շբաւականանալ իմ գրքոյկովս

յամեննայն դէպս եթէ յաջող գտնէ զայն
կամ անկատար, այլ անկէ ետքր դիմել զայ
պատմութեան ընդարձակ աշխատութեանց,
օգտուելով իմ « Տարեգրութիւնն » իրեն
ուզեցոյց միայն: Ճշմարտապէս ես ալ այն-
պէս կը համարիմ իմ « Տարեգրութիւնն »
շտու մի համեստ ձեռնարկի: որմէ յետոյ պէտք
է յաջորդէ շատ աւելի ինոր ուսումնափրու-
թիւն մը հայ աշխարհին վերաբերեալ, շատ
աւելի մասնամասնորդէն արքանաւոր խնդի-
րիներու ուսումնափրութեամբ աշխատու-
թիւններ զայ Պատմութեան վերաբերեալ:

1916 Նոյեմբեր ՎԱԼԵՐԻ ԲԵՐԻՍՅՈՎ

Փամանակիս պարագաները տարիի մ'ա-
ւելի ուշացոցին գրքոյկիս տպագրութիւնը,
զոր կը ինդրեմ որ ընթերցողը աշքի տուած
ունենայ այսպէս թէ այնպէս յառաջարա-
նիս մէջ, արդէն մտած են ժամանակադրու-
կան ինչ ինչ սխալներ: վերջին տարուան
աշխատութիւններս ինձ աշքէ անցընել կա-
րելի չեղաւ:

Փետր. 1918

Վ. Բ.

(Տարութակելի) Թրգմ. Հ. Յ. Վ. ՄԱՐԴԱՐԵՆԻ

Ա.Ց.Դ. Շ. ՈՒ Խ. Ե.Ս

Ինչպէս մի վըտակ մարմանդի մէջէն
ինչպէս մի սարսուա սիրոյ լարերէն,
ծս իմ խորն հովոյս կը լըսնմ մի ծայն
Մի զըրոյց անոյշ աղօթքի նըման:

Ու հեզածաւալ հոգիէ հոզի
Աննիթ և հեշտին երգի պէս կ'անցնի.
Սիրոյ հետ շապուած ինչպէս շողն առուուան
Աղըիւրն է վընթիս իմ անմահութեան:

Ես հարբած աստուած երկնքի շաղով
Իմ կեանքս է հիւսուած երազ ծաղիկով.
Ու միշտ նոր տեսիլ ու միշտ նոր խոկում
— Այդ դուն ես ովք քաղցր բանաստեղծութիւն: